

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆ  
ԽՈՂՄ ՍՆՈՒՆԴԱՐԴՅՈՂԿՈՂԿՈՄՍ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՆԱԿԱՆ ԱՌՈՒՋՏԱՐԱԿԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՆՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. ՌԱԳԿՈ

Ժ Խ Ա Խ Ո Տ Ի  
Վ Ո Ռ Ո Գ Ո Ւ Մ Ը

633

Ղ-19

ԳՅՈՒՂՀՐԱՑ — ՅԵՐԵՎԱՆ 1936

24 JUL 2013

13310

04 AUG 2013

ԿՈՒՏԵՆՏԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՈՍՏ ԱՆՈՒՆԴԱՐԴՈՂԿՈՍԱՏ

ՀԱՄԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՋՏԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՅՍՏԱՆԻ ԳՐԱՍԵՆՑԱԿ

633

Ա. Յ. Ա. Կ. Կ. Կ.

12-19


պ

1009  
39331

41077

Ծ Խ Ա. Խ Ո Տ Ի  
Վ Ո Ռ Ո Գ Ո Ւ Մ Ը

(ՀԱՅՍՏԱՆԻ ԾԽԱՆՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՓՈՂՁՆԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ)



1936



Սեյաստանք նայել յեկ խմբագրել և համամիութենական  
Միախոսագործական ինստիտուտի Հայաստանի փորձակա-  
յանի գիտական խորհուրդը

---

## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Ց Ո Ւ Ն

Արագորեն զարգացող սոցիալիստական գյուղատնտեսության արտադրության զուգնըթաց՝ Հայաստանի սոցիալիստական յերիտասարդ ծխախոտագործությունը խորհանտեսությունների և կոլտնտեսությունների առաջ զնուժ է հսկայական ինդիլրներ: Սոցիալիստական ծխախոտագործությունը պետք է բավարարի վոչ միայն լեզկրի ներքին պահանջները, այլև պետք է առ մեծ քանակությամբ եքսպորտային ծխախոտ:

Խորհանտեսային և կոլտնտեսային բազալի հիման վրա մենք յուրացնում ենք նոր հողամասեր՝ ծխախոտի ցանքերի համար: Միախոտագործությունը Հայաստանում ունի կարճ պատմություն, սակայն այդ ժամանակաշրջանում ձեռք են բերվել խոշոր նվաճումներ: Այսպես, 1924 թ. Հայաստանում ցանված է լեզել ընդամենը 25 հեկտար ծխախոտ, իսկ 1935 թ.՝ 2528 հեկտար: Հետագայում, ծխախոտի հողամասերի ընդարձակ-



ման հետ միասին, հիմնականում մենք պետք է պայքարենք բերքատուլության բարձրացման համար, կիրառելով և ճշտորեն կատարելով ազդեցիկական քուլտուր միջոցառումները—ծխախոտի խնամքը մշակման ամբողջ ժամանակաշրջանում (սածիլային, դաշտային), ծխախոտի նախնական վերամշակման և տնտեսության ջրման տեխնիկայի տիրապետումը, — ահա այն նախապայմանները, վորոնց ճիշտ կատարումը կույտնտեսությունների և խորհանտեսությունների կողմից կապահովի բարձր ու լավորակ բերքի ստացումը:

Հայաստանի կլիմայական և հողային բնական բարեհաջող պայմանները հնարավորություն են տալիս ստանալու ծխախոտի բարձր բերք:

Հիմնական պայմանները, վորոնք ազդում են ծխախոտի վորակի և քանակի փոփոխման վրա, ջրմության և հողի խոնավության բաշխումն է ծխախոտի աճեցողության ու տերրիների հասունացման շրջանում:

Ջերմության քանակը և նրա բաշխումը մեր ծխախոտագործական շրջանում միանգամայն նպաստավոր է:

Բույսի նորմալ աճեցողության համար հոգի խոնավության անհրաժեշտ պաշարը կարելի չէ ստանալ կամ մթնոլորտային տեղումներից (անձրևից), կամ թե արհեստական ձևով հողին խոնավություն, ջուր տալու լեղանակով:

Ցուրաքանչյուր կույտնտեսական պետք է խնամա, վոր Հայաստանում ամառվա ընթացքում մթնոլորտային տեղումներ հաճախ քիչ են լինում և չեն բավարարում բույսի աճեցողության համար, այդ պատճառով ծխախոտն առանց ջրելու չի կարող աճել: Հայտնի չէ, վոր բարձր բերք կարելի չէ ստանալ միայն այն դեպքում, յեթե նա լավ է ջրվում:

Սակայն քուլտուր կույտնտեսականները և խորհանտեսության աշխատավորները չզլտեն, ինչպես և յե՛րը լավ է ջրել ծխախոտը, վորպեսզի ստացվի լավորակ ծխախոտ, աշխատանք քիչ թափվի և ջրման համար քիչ ջուր ծախավի:

Շատ կույտնտեսություններ և կույտնտեսականներ ծխախոտին ավելի շատ ջուր են տալիս, քան նրան տներաժեշտ է: Լինում է և հակառակը, այն է՝ ծխախոտին տալիս են քիչ ջուր, քան այն պահանջում է. դա հետևանք է ջրողների անաշխատանքի սխալ կազմակերպման, կամ թե ջրում են այն ժամանակ, յերբ բույսը խոնավության կարիք չի զգում:

Առանձնապես ջուրն ի չարն են գործադրում այն տեղերում, վորտեղ ջուրն առատ է, ինչպես նաև ջրային սիստեմների սկզբնամասերում. շատ ջրելուց այն փաստակար հետևանքն է ստացվում, վոր, նախ՝ մեծ քանակությամբ ջուր տալը վոչ



միայն չի բարձրացնում րեբրատվությունը, այլ, ընդհակառակը, իջեցնում է. բացի այդ, յերկարաձգում է ծխախոտի հասունության ժամկետը, իջեցնում է վորակը (բացակայում է արոմատը, թուլանում համը) և նույնիսկ ծխախոտի հիվանդություններ է առաջացնում: Բացի գրանից, ջրոգտագործման շուրջումը հարված է հասցնում այն տնտեսություններին, վորոնք քնկած են ջրային սիստեմների ավելի ցածր մասերում, խելով նրանցից ջրի անհրաժեշտ քանակությունն ու գրանով իջեցնում բերքատվությունը: Ներկայումս կոլտնտեսություններին աններելի յե ջրման նման չարաչահությունը՝ ի վրաս մյուս կոլտնտեսությունների: Իրանից խուլս տալու համար անհրաժեշտ է խստորեն առաջնորդվել ջրոգտագործման այն պլանով, վոր կազմում են ջրջանային ջրային տնտեսության որդանները, վորը և քննված է լինում հենց իրենց՝ կոլտնտեսությունների կողմից:

Շատ կոլտնտեսություններ գեռևս բավարար չափով չեն ուսումնասիրել ծխախոտը ջրելու յեղանակները և չեն իմանում թե ծխախոտը յերբ, ինչ ժամկետներին, ինչ յեղանակով պետք է ջրել, ինչպիսի ոգտակար ձևով ջուրը բաշխել արտի մեջ, այդ ջուրն ինչ ձևով պահպանել հո-

դի մեջ և պաշտպանել ավելորդ ծախսումից, վորը լինում է գոլորշիացման միջոցով:

Մեր նպատակն է սույն գրքուկի միջոցով պատասխանել վերոհիշյալ բոլոր հարցերին, հիմնով չալաստանի ծխախոտագործական վորձնական կայանի աշխատանքների և անձնական գիտողությունների վրա:



ՎՈՌՈՂՄԱՆ ՅԵՂԱՆՍԿԵՐԸ

Գաղտնիքի վառագման համար ջուրը գետից  
կամ վոռագման այլ աղբյուրներից հոսում է վաղ  
թե միանգամից, այլ անցնում է խոշոր և մանր  
առուններով, վորոնք կրում են մայր առու, ջրբա-  
ժան առու և վոռագող առու անունները: Դաշախ  
ջուր է արվում ջրուար առունների միջոցով, վոր  
ջուրը վերցնում է անտեսական վոռագող առվից  
և այս կամ այն ձևով հոսում գաշախ վրա: Հողի  
մեջ նորմալ քանակի ջուր մտցնելը, վորը հնարա-  
վորություն է տալիս ստեղծելու անհրաժեշտ  
խոնավությունն ըստի համար, կատարվում է ջրման  
այս կամ այն լեղանակով, վորը կախված է հո-  
ղային և ջրվող գաշախ դիրքից ու այլ պայման-  
ներից, ինչպես նաև մշակվող մշակույթի բնույ-  
թից: Որինակի համար, ծխախոտին անհրաժեշտ  
խոնավություն կուտակելու հնարավորությունը  
տարու համար գործ է դրվում, այսպես կոչված,  
ակոսներով ջրելու ձևը, բրնձի համար՝ լճացման,



բանջարանոցային մշակութիւնների համար՝ ուրիշ  
ձևեր և այլն:

Յերեկով մեր փորձնական կայանի զիտողու-  
թյուններից, մենք ծխախոտի համար առաջադրում  
ենք մանր ակոսներով ջրելու յեղանակը, վորն  
ավելի շահավետ և տվյալ մշակութի համար:

Ջրելու մյուս յեղանակները մենք չենք քննի,  
այլ կնկարագրենք միայն ակոսներով ջրելու յեղա-  
նակը:

Այս յեղանակով ջրելու համար դաշտը պիտի  
նտխապատրաստել հետևյալ կերպ.

1. Ջրումն ըստ ակոսների.— Այս ձևով ջրելու  
համար դաշտում նախ անհրաժեշտ և ամենէ  
նախասածիլման աշխատանք (կրկնահերկ, փոց-  
խում և այլն) և ապա ակոսներ պատրաստել:  
Նախասածիլման աշխատանքները սովորաբար  
կատարվում են ծխախոտը սածիլելուց 10—15  
որ առաջ, իսկ սածիլելուց 5 որ առաջ պատրաս-  
տում են ակոսները:

Ակոսների պատրաստումը պետք է լիովին  
մեքենայացներ:

Ակոսներ անցկացնելու համար կարելի յե  
ոգտագործել նաև բուկ տվող մեքենա, վորը  
գործադրվում է ծխախոտագործական խորհորն-  
տեսութիւններում ձիու ուժով, ինչպես նաև  
արակատորային շրջող մարկյորով: Շրջող մար-

կյորը մեծ առավելութիւն ունի հասարակ գոր-  
ծիքների համեմատութեամբ: Նախևառաջ նա  
տալիս է աշխատանքի մեծ արտադրողականու-  
թյուն և յերկրորդ, կարգավորում է ակոսների  
խորութիւնը, վորը շատ կարևոր է: Գործնա-  
կանում, ջրովի դաշտերում պետք է վերացվի  
նաև փայտյա մարկյորի, ինչպես նաև տրակատ-  
րային թաթավոր մարկյորի միջոցով ակոսներ  
անցկացնելը, վորովհետև փայտյա մարկյորի աշ-  
խատանքը հնարավոր է միայն թեթև, վոչ ապա-  
ռաժուս հողերում. բացի այդ, դրա միջոցով շատ  
դժվար է կարգավորել ակոսների խորութիւնը:  
Անջրդի շրջաններից տրակատորային մարկյորները  
(թաթավոր կտրվածքներով) փոխադրված են ջրովի  
տնտեսութիւնները, վորտեղ գործ են անում  
դաշտը մարդոցելու համար, նպատակ ունենալով  
ծխախոտի տնկման համար ուղիղ շարքեր և վոչ  
խորը ակոսներ ստանալ (մինչև 5 սմ), վորը ջրովի  
տնտեսութեան պայմաններում բավարար չե-  
վոչ խոր ակոսները նախևառաջ բավարար սը-  
նունդ չեն տալիս բույսի արմատներին, յերկրորդ՝  
նախասածիլման և հետասածիլման ջուրն ակոս-  
ները միանգամայն լցնում է, դրանով իսկ դժվար  
ացնում ծխախոտի հետագա ջրումը, վորպիտի  
հանգամանքը խիստ անդրադառնում է բույսի  
վրա և հնարավորութիւն չի տալիս ջուրը ճիշտ



կերպով բաշխել դաշտի մեջ: Ակոսների միջի տարածութիւնը կախված է հողի տեսակից և այս կամ այն տիպի ծխախոտի տնկման համար նախատեսված բույսի խորութիւնից (գլանակային, սիգարային և այլն): Կավալազային հողերում այդ տարածութիւնը պետք է լինի 60—75 սմ, կավային հողերում՝ 70—80 սմ, իսկ ավազային հողերում՝ 45—60 սմ:

Հայաստանում մշակվող ծխախոտի տեսակների համար, համաձայն Հայաստանի ծխախոտագործական փորձնական կայանի ավյալների, ծխախոտի սածիլների խորութիւնն ըստին առաջադրվում է հետևյալ կերպ.

1. Գեղի գոմեակային ծխախոտ

- ա) Սաժառն Աճ 57 65 20 սմ) (Չրոլի պայմաններում)  
բ) Տբապիզան Ռ 1172 70.20 սմ

2. Մեծ տերեվազար ամբիկական տեսակներ

- ա)՝ Մարիլանդ և Քերլոյ տիպի 80 սմ 30 սմ  
բ)՝ Վիսկոնսին « 80 սմ 40 սմ  
դ)՝ Վերջինյա « 80 սմ 25 սմ

Առաջադրած ծխախոտի սածիլման խորութիւնը մնում է անփոփոխ բոլոր տեսակի հողային պայմաններում, քանի վոր ծխախոտի դաշտերը պատկանում են կավալազային կամ ավա-

1) Առաջին թիվը ցույց է տալիս, թե շարքը շարքից վորքան հեռու լինի իսկ յերկրորդ թիվը՝ բույսը բույսից ինչ հեռավորութիւն վրայ յե գտնվում:

դային հողերին, այդ իսկ պատճառով միջնաբային տարածութիւն լայնութիւնը (գլանակային ծխախոտների համար) 65 սմ և բույսերի միջի տարածութիւնը 20 սմ միանգամայն ապահովում է Չրի նորմայ բաշխումը գաշտում և շարքամիջյան տարածութիւն մեքենայական մշակումը:

Թեթե հողերում ակոսների յերկարութիւնը, վորտեղ Չուրն իր բնթացքի միջոցին արագորեն ներծծվում է, չպետք է ավելի լինի 50—60 մետրից, միջակ հողերում՝ 80—160 մետր, իսկ ծանր հողերում 100—150 մետր:

Ակոսների խորութիւնը պետք է լինի 15—20 սմ: Չի թուլասարվում վոչ խոր ակոսներ անցկացնելը, վորովհետև Չրելուց հետո զրանք շատ ջուտ վողողվում են և հետագայում հողաշերտն այնքան էլ լավ չեն թացացնում: Ավելի լավ է խոր ակոսներ պատրաստել, վորովհետև Չուրը խորը հոսելով՝ լայնորեն թացացնում է հողը:

Ակոսների հորիզոնական թեքութիւնը տարբեր է լինում: Ամենաբարեհաջող թեքութիւնը համարվում է 0,003—0,004, այսինքն՝ յերբ ակոսների թեքութիւնը յուրաքանչյուր 100 մետրին հավասար է 30—40 սմ):

Ակոսների ծայրանեղ թեքութիւնը համար-



վում է 0,001—0,009 ամ. Չրվող դաշտը թեք լինելու դեպքում, փորը տատանվում է 001—002 ամ միջև, ակոսները պետք է քաշել թեքության ուղղությամբ, այսինքն գաշտի թեքությամբ: Յերբ չրվող դաշտի թեքությունը 0,003 ամ-ից ավելի չե, ակոսներն անհրաժեշտ է քաշել թեքության հակառակ ուղղությամբ: Վորքան մեծ է գաշտի թեքությունը, այնքան փոքր պետք է լինի ակոսի թեքությունը և, ընդհակառակը, գաշտի փոքր թեքության դեպքում (վաչ ավելի 0,009 ամ-ից) ակոսները պետք է անցկացնել ավելի թեք, այսինքն՝ մեծ թեքությամբ դեպի գաշտի վայրեջքը:

Շատ թեք հողերում ակոսները վայրեջքի ուղղությամբ պետք է շինել շատ բիշ թեքությամբ, իսր փորել և շատ լերկար շանել: Այսպես ուրեմն, դաշտում ակոսներ քաշելու աշխատանքները կատարվում են հետևյալ ձևով: Արտադրական բլջի սահմաններում (20—25 հեկտար), լեյնելով չրվող դաշտի հողաշերտից և դիրքից, ընտրվում է ակոսների ուղղությունը և նրանց միջի լայնությունը (հաշվի առնելով տնկվելիք ծխախոտի տեսակը): Համաձայն նշված ուղղության բաց է թողնվում տրակտորը՝ մարկչորով: Ակոսներ անց են կացվում տրակտորի վարի ամբողջ լերկարությամբ, փորը հավասար պետք է լինի ամբողջ


հողամասի լերկարությանը (լեքք ակոսներն ուղղված են թեքության ուղղությամբ) կամ նրա լայնությանը (այն դեպքում, յերբ ակոսների ուղղությունը թեքության հակառակն է): Տրակտորի վերցրած ուղղությունը պետք է աշխատել շփոխել: Սա անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի առանձին հողամասերի միջի շարքերը (արտադրական բլջի սահմաններում) ամբողջ տարածության վրա համատեղվեն, ապահովելով հետագայում ձիու կամ տրակտորի միջոցով մշակում կատարելը: Յերբ ամբողջ դաշտի վրա ակոսները քաշված կլինեն, շրելուց առաջ, գուլթանով պետք է բացել շրտար առուները և գաշտը բաժանել ջրման մասերի:

Վերջին առուն, փորից շուրը հոսում է անմիջականորեն այս կամ այն հողամասի վրա և փորն անց է կացվում ակոսին հավասար լերկարությամբ, կոչվում է շրելու առու: Յնելով ակոսների համար ընդունված ուղղությունից, այս առուն տարվում է կամ թեքությանն ուղղահայաց, կամ չրվող դաշտի թեքության ուղղությամբ:

Չրելու առուն ժամանակավոր է և գործում է միայն բույսի աճեցողության շրջանում: Այդ առուն պատրաստում են գուլթանով, յերկու անգամ հաջորդաբար նույն տեղը փորելով, ապա



բաներով խնամքով պատրաստում են: Այդ առու-  
ների խորութունը պետք է լինի 30 սմ: Ակոս-  
ները դաշտի թեքությանը հակառակ ուղղությամբ  
դասավորված լինելու, իսկ ջրման առուն դաշտի  
ուղղությամբ լինելու զեպքում առվի լայնու-  
թյունն անհրաժեշտ է ավելացնել՝ վողորելուց



Նկար 1

խույս տալու համար: Այնուհետև, ջրելուց առաջ  
անհրաժեշտ է առվի ուղղությամբ դուրսանող  
անցկացնել ոժանդակ առու, վորը կոչվում է  
ոժանդակ ակոս:

Ոժանդակ ակոսն անհրաժեշտ է պատրաստել  
անպայման, վորովհետև չի կարելի ջրելու առ-

վակից ջուրը բաց թողնել ակոսների մեջ, քանի  
վոր այս զեպքում առվի փորված տեղերը ջուրը  
կպատուի և կլցվի ամբողջ հողամասը:

Յերբ առուն պատրաստ է, նրա ժիշով բաց  
է թողնվում ջուրը, վոր բաշխվում է համառափ՝  
5—10 ակոսների միջև: Զրելուց առաջ անհրաժեշտ  
է ակոսների մեջ բաց թողնել ջրի փոքր շիթեր,  
այնուհետև վորոշ ժամանակից հետո ջրի քանա-  
կությունը կարելի յե շատացնել: Իս անհրաժեշտ  
է հետևյալ պատճառով. նախ՝ փոքր շիթը հոսում  
է դանդաղ, իր ճանապարհին աստիճանաբար է  
թացացնում ակոսի հողի ամեն մի կտորը, ակոսի  
մեջ չի բայքայում հողակտորները, այլ, ընդհա-  
կառակը, հողը միացնում է իրար: Ակոսի հատակը,  
նայնպես և նրա կողերն աստիճանաբար թացա-  
նում են և չեն ծածկվում տղմով: Մեծ շիթերը  
հոսում են ավելի արագ: Բոլոր կոշտերը, վորոնք  
հանդիպում են նրան ակոսների հատակի ու կո-  
ղերի վրա, քայքայվում են, մանրանում, վորից  
հողի բոլոր ծակոտիներն արագորեն տղմով ծածկ-  
վում են: Այդ պատճառով ջուրը չի կարող ծծվել  
հողի ներքևի մասերը, կամ թե ծծվում է շատ  
դանդաղ: Զրի մի մասը, չկարողանալով ծծվել  
ներքև և հասնել ակոսի ներքը, միանգամայն  
դուրս է թափվում անսգուտ կերպով:

Յեթե սկզբից պիտեք ջրել փոքր շիթով, իսկ





հետ աստիճանաբար ավելացնենք, այդ դեպքում կարելի յե ջրել լավ և արագ, քանի վոր շուրն արագորեն ծծվում ե ներքև վոչ թե տղմով լցված մասերով, այլ հողի ծակոտիւների միջոցով:

Ճիշտ ջրելու և մանր ցանցի կազմակերպման դեպքում մեր խորհանտեսություններում և կոլտնտեսություններում հնարավորություն կը ստեղծվի ամենաբարձր արդյունքներ ստանալ, ծխախոտին շուրը տալով ժամանակին և անհրաժեշտ քանակությամբ: Մանր և վոչ ճիշտ ջրային ցանց ունենալն անդրադառնում ե ծխախոտի բերքի վրա, քանի վոր ջրումը սխալ ե կատարվում և բույսին անհրաժեշտ քանակությամբ ջուր չի տրվում: Դրա արդյունքն այն ե լինում, վոր ջրողների աշխատանքը բարդանում ե, արտադրողականությունն ընկնում և պահանջում ե ուժեղ լարվածություն:

Բերքատավության իշեցումը վնաս ե հասցնում վոչ միայն խորհանտեսություններին և կոլտնտեսություններին, այլև ընդհանուր ժողովրդական անտեսությանը:

Վոռոզվող դաշտի, այսպես կոչված «տախաակներ»-ով դասավորման մեթոդից, վորն անցյալներում կիրառվել ե Լամբարվի ծխախոտագործական խորհանտեսությունում, անհրաժեշտ ե հրաժարվել, քանի վոր այդպիսին անըն-

դունելի յե ջրովի անտեսության պայմաններում. այդ ձևը կիրառվում ե հուբանի շրջանում՝ աշխատանքի կազմակերպման պորժը հեշտացնելու համար, իսկ մեզ մաս դա անցել ե մեխանիկորեն:

Իռչան ըստ սախտակների բաժանելու կարգը—նեղ կտորներով մինչև 15 մետր լայնությամբ, կատարվում ե առանց հաշվի առնելու ջրվող անտեսության տարրական պահանջները, ինչպիսին են աղոտների յերկարությունը, ջրման շիժի մեծությունը և այլն:

Ջրման շիժի չափն աղոտներով ջրելու դեպքում պետք ե ունենա մեկուկես կամ յերկու բաշ ջուր (35—50 լիտր մեկ վայրկյանում) լուրաքանչուր հեկտարին, ըստ վորում թեթև հողերում, վորտեղ ջրի շիժը հեշտությամբ ե ծծվում, պետք ե լինի ավելի շատ, իսկ ծանր, կավային և վատ թափանցիկ հողերում այդ շիժը պետք ե լինի ավելի փոքր: Իռչտը մեծ թեքություն ունենալու դեպքում ևս ջրի շիժերը պետք ե լինեն փոքր, քիչ թեքության դեպքում՝ քիչ շատ:

Ծխախոտի աճեցողության շրջանում ջրելու շիժի մեծությունը նույնպես պետք ե փոփոխվի: Ջրման առաջին շրջանում—նախասածիլման և սածիլման ժամանակ, դարնանը ջրի շիժը պետք ե լինի ավելի քիչ: Ամառը, շոգ ժամանակ, ջրման շիժը պետք ե ավելացվի:



Ջրելու շիւ ամբողջ քանակը (մեկ ու կեսից մինչև 2 բաշ) պետք է բաշխվի միաժամանակ վոշ պակաս, քան կես հեկտարի վրա: Ջրելուց հետո, յերբ հողը կչորանա, անհրաժեշտ է կատարել փխրեցում, վոշնչացնելով կեղևը, վորպիսին առաջանում է միայն ակունների մեջ: Փխրեցումը, բացի այն, վոր պայքարում է մոլախոտերի դեմ, տալիս է նաև մեծ ոգուտ, պահպանելով հողի մեջ ջրելուց առաջացած խոնավությունը գոլորշիացումից:

Փխրեցումը համատեղվում է ծխախոտի քաղհանի և բուկ տալու հետ, վոր անպայմանորեն պետք է կատարվի ջրելուց հետո (այլ վոշ թե ջրելուց առաջ, ինչպես դա հաճախ արվում է): Բաղհանի քանակը (փխրեցումը) վորոշվում է ծխախոտի մշակման համար սահմանված ազդողանոսներով:

Այսպիսով տեսնում ենք, վոր ծխախոտի ջրումն անհրաժեշտ է կատարել մանր ակուններով: Ջրելու այս ձևը հանդիսանում է ամենալավը՝ գոյություն ունեցողների համեմատությամբ, հետևյալ պատճառներով.

1. Ակուններով ջրելու դեպքում ջուրը տարածվում է դաշտի վրա համաչափ կերպով:
2. Այս ձևի ջրումը պահանջում է ավելի քիչ քանակությամբ ջուր ամեն մի ջրելու համար համեմատած ջրելու մյուս յեղանակների հետ:

3. Հնարավորություն է տալիս հողի մեջ ջուրը պահպանել հեշտությամբ և քչացնում է ջրի գոլորշիացումը՝ շարքերի միջի տարածությունը ջրելուց հետո փխրեցնելու միջոցով:

4. Ջրելուց հետո կեղև առաջանում է միայն ակունի մեջ. ակունի կատարները չեն յենթաբլվում ջրի ազդեցությանը և մնում են փխրեցված:

5. Ակուններով ջրելու ձևը, մյուս ձևերի նկատմամբ ջրի միեկուն քանակը ծախավելու դեպքում, տալիս է ծխախոտի մեծ բերք և չոր մասուտ:

6. Այս ձևի ջրումը լրիվ հնարավորություն է տալիս դաշտում կիրառելու մեքենայական մշակում նախքան ծխախոտ տնկելը, ինչպես և նրա անեցողության շրջանում:

7. Առանձնապես այս ձևի ջրումը տալիս է լավ արդյունք խոշոր տնտեսություններում և հարմարեցություններում, վորտեղ կիրառվում է մեքենայական մշակումը:

8. Ըստ ակունների ջրումը հնարավոր է կիրառել բոլոր տիպի և ամեն տեսակի թեքություն օճնեցող հողերում:

Ինչպես տեսնում ենք, մանր ակուններով ջրելու ձևն ունի խոշոր առավելություններ:

— Ջրեցեք մանր ակուններով — և կատարեք ծխախոտի բարձր բերք՝ ցածր ինքնարժեքով:



Կիրառելով ակոսներով ջրելու ձևը, մենք հնարավորութիւն կունենանք լայնացնել ծխա-  
թափ ցանքերի տարածութիւնը և շուտափութի  
լսւրացնել մեր ծխախոտագործական շրջանների  
նախալեռնային լանջերը:

### ԾԽԱԽՈՏԻ ՋՐՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Ջրելու նորմա կոչվում է ջրի այն քանակու-  
թիւնը, վորն անհրաժեշտ է մեկ հեկտար հողը  
մեկ անգամ ջրելու՝ այս կամ այն բույսի նորմալ  
անճեցողութեան համար: Գործնականում շատ հա-  
ճախ ի շարն են գործ գնում և մի ջրելու համար  
սալիս են ավելի շատ ջուր, քան անհրաժեշտ է:  
Իրանից ստացվում է վոչ թե սգուտ, այլ վիսա:  
Ավելի արված ջուրը ծծվում է ներքև, կարող է  
հասնել մինչև ստորերկրյա ջրերը և այն բարձ-  
րացնել վերև: Ավելի վոչ խոր դռնված ստորերկ-  
րյա ջրերը նպաստում են հողերի աղիացմանը  
և լճացմանը, վորի հետևանքով ել իջնում է  
բերքատվութիւնը:

Իրանից կարող է մեծ վիսա ստացվել վոչ  
միայն նրա համար, վոր կծախսվի իզուր տեղը մեծ  
քանակութեամբ ջուր և կստացվի քիչ բերք, այլ  
կարող է աղիացման ու լճացման հետևանքով  
փչացնել դաշտերը չերկար տարիներ:

Մեծ քանակութեամբ ջրի նորմաներով լեր-  
կար ժամանակ հողը ջրով չի կարելի ապահովել:  
Միևնույն է, շատ ջուր տալով հողին, նա չի  
կարող կուտակել իր մեջ ավելի խոնավութիւն,  
քանի վոր հողը հնարավորութիւն ունի վերցնե-  
լու այնքան ջուր, վորքան նա կարող է: Միև-  
նույն է, մեր ամառային շոգ պայմաններում  
անհրաժեշտութիւն է զգացվում դաշտը ջրել  
քիչ ընդմիջումներով: Յեթե ծխախոտին արվեն  
ջրի մեծ նորմաներ, այդ դեպքում ծխախոտի  
վորակը կվատանա, և վորքան այդ նորմաներն  
ավելացվեն, չնայած ընդհանուր բերքատվութեան  
բարձրացմանը, բերքատվութեան միջին աճը մեկ  
խորանարդ մետր ծախսված ջրելու տարածու-  
թիւնից իջնում է:

Վորպես որինակ ներքև բերում ենք ծխա-  
խոտի բերքի ավալներ, վորոնք ստացված են  
Ջրային նորմաների ուսմնասիրութիւնից:

Ջրելու նորման կողմ. մեթր. շառ.	Իսան Ջրամեծի Միտր. շառ.	Սկստեցի 1 տարի (տարի տար մշակման բարձրագոյնը)	Բերքի քանակ. տոննալ. շառ.	Բերքի միջին աճը 1 կ. մետ. քա վրա (կիր. գործ.)
Ապրիլի	—	12,7	100	—
200	6	15,1	119	1,26
300	6	16,3	128	0,91
400	6	16,8	132	0,70
500	6	17,10	134	0,67



Միախոտի ասորախմենտի յերւոյթը և նրա փորակն իջնում է ջրելու նորման բարձրացնելու դեպքում:

Ջրելու նորման միկ հեկտարին խոր. մետր.	Տեսակների յերւոյթը տուրման հոշանքով	
	1-ին և 2-րդ տեսակ	3-րդ տեսակ և բրածկ
200	79,0	21
300	64,5	35,5
400	62,5	37,5
500	50,0	50,0

Վերոհիշյալ աղյուսակից տեսնում ենք, վոր ծխախոտի համար ջրելու քիչ նորմաները տալիս են փայլուն արդյունքներ, ծխախոտի վորակական բարձր ցուցանիշներ ու բերքի մեծ աճում՝ ջրելու մի խոր. մետր տարածութեան վրա:

Մեծ քանակութեամբ ջրելու նորմաներ տալու դեպքում 500 խ մետր և ավելի՝ մեր պայմաններում մեծ եֆեկտ չի ստացվում. բերքի բարձրացումը անդի յե ունենում 2 տոկոսով, մինչդեռ ծխախոտի ասորախմենտն իջնում է համարյա թե 50 տոկոսով: Բացի դրանից, ջրելու մեծ նորմաներն ազդում են ծխախոտի հասունացման արագութեան վրա, հասունացման սկիզբը յերկարաձգելով 10—12 օրով, վորը նույնպես հետադաշում անդրադառնում է հումքի վորակի վրա:

Ջրվող հողամասի միկրոտելեֆային անբարենպաստ պայմանների դեպքում, ջրման մեծ նորմաներն առաջացնում են այսպես կոչված «ալրացող» հիվանդութուն (мучнистая роса): Միախոտի տերևն այդ հիվանդութեան ժամանակ ծածկված է լինում տլրանման կամ մոխրանման փոշիով: Տերևի վերին մասում յերկվում են սնկեր, վորոնք ծծում են սննդարար նյութերը:

Շատ հաճախ վնասվում են փարթամ աճեցողութուն ունեցող ծխախոտերը, վորոնք ընկած են ցածր մասերում և ջրվում են մեծ նորմաներով: Այս պայմաններում քամու հոսանքի բացակայութեան և շատ խոնավութեան հետևանքով ստեղծվում են բարենպաստ պայմաններ այդ հիվանդութունների զարգացման համար, վորոնք շատ արագութեամբ տարածվում են ամբողջ բույսի վրա, անցնելով ներքևի տերևներից վերևի տերևներին:

Բացի այդ, հիվանդութեան հետևանքով ինտենսիվ ջուր տալով, ծխախոտի տերևների վրա յերևում են մեծ քանակութեամբ լվիճներ, կարող է սուաջանալ նաև ծաղիկ (բյաբուխա), մոնտար և այլ հիվանդութուններ: Վերոհիշյալ բոլոր հիվանդութունները հանդիսանում են ծխախոտի բերքի վորակական ցուցանիշների վրա ազդող գործոններ:



Այդ իսկ պատճառով, ջրելու նորմաները վարչելիս, անհրաժեշտ է լինել ծխախոտի մշակույթի առանձնահատուկ պահանջներից և, վոր պլեավորն է, հաշվի առնել հողալին ու ծխախոտի տարրեր տեսակների պահանջը ջրի նկատմամբ:

Թեթև և հեշտ ծծվող հողերում պետք է ջրել փոքր նորմաներով, սակայն հաճախակի ջրելու մեծ նորմաներ տալու դեպքում ջուրը ծծվում է ավելի խորը և ծխախոտի արմատները, վորոնք խորը չեն անցնում, չեն կարողանում ոգտվել այդ ջրից, ու այդպիսով ջուրն իզուր տեղը կորչում է: Ջրելու վոչ շատ նորմաներ տալու դեպքում ջուրը բացառապես տարածվում է հողի այն շերտում, վորտեղ տարածված են արմատները, ու ամբողջովին ընդունվում և սգատողործվում է:

Մանր և խոնավունակ հողերում պետք է ջրել ավելի մեծ նորմաներով, և ջրել վոչ թե հաճախակի, այլ ավելի չերկար ընդմիջումներով: Մոփորական պայմաններում, վորոնք տարրերվում են փորձի պայմաններից, ծխախոտը ջրելու հատոր կարելի չե առաջարկել հեռույալ նորմաները.

1. Մանր աղոսներով ջրելու ձևով թեթև և միջակ հողերում նորման կարելի չե տալ յուրաքանչյուր հեկտարին 400—500 խոր. մետր:

2. Նույն ձևի ջրման դեպքում, բայց ծանր

և խոնավունակ հողերում այդ նորման անհրաժեշտ է հասցնել յուրաքանչյուր հեկտարին 600—800 խոր. մետրի:

3. Սածիլման և հետաածիլման ջուրը, վորը տրվում է հողին՝ սածիլելու անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար և վոչ թե նպատակ ունենալով խոնավութուն կուտակելու՝ բույսի հետագա աճեցողության համար, պետք է տալ փոքր ջրելու նորմաներով, այն է՝ մեկ հեկտարին 200—400 խ մետր:

Կոլտնտեսականները և ծխախոտագործական խորհրտեսուլթյունների աշխատավորները պարտավոր են խստորեն հետևել վոռոզման վորակին:

Ջրվորները պետք է աշխատանքը կատարեն ստախանովյան մեթոդներով, պայքարելով վոռոզումների վորակի և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար:

Վոռոզման աշխատանքները ստախանովյան մեթոդով կատարելու համար անհրաժեշտ է հետևելալ.

1. Նախապես նախապատրաստվել վոռոզմանը, այն է՝ ջրի առուններից թժրեր կառուցել, մաքրել և ուղղել ջրի առունները:

2. Վոռոզում կատարելու ժամանակ ճիշտ դասավորել բանուժը բրիզադում:

3. Տիրապետել վոռոզման անխնիկային, այն



ե՛ ուսումնասիրել վոսոզման պրոցեսները տար-  
բեր պայմաններում, համաչափ բաշխել ջուրը  
դաշտում, կատարելագործել, ռացիոնալիզացիայի  
յենթարկել աշխատանքը և այլն:

Լայն կիրառելով աշխատանքի ստախանո-  
վյան մեթոդները վոսոզման ժամանակ, պայքա-  
րելով վոսոզող ջրի տնտեսման համար, յուրա-  
քանչյուր վոսոզման անհրաժեշտ ժամկետին ապա-  
հովելով ծխախոտային բույսերն անհրաժեշտ  
քանակութեամբ ջրով—սրանով մենք կատանանք  
ծխախոտի ավելի մեծ, բարձրորակ բերք:

Կոլտնտեսութունների և խորհրմանտեսու-  
թյունների աշխատավորները խստորեն պետք է  
հետևեն ջրումների վորակին. անհրաժեշտ է պայ-  
քարել չարամատրեն. ծխախոտի ցանքերին լրիվ  
ջուր չտալու խոչընդոտների դեմ, վորը հարուց-  
վում է ջրոզների կազմից:

Լայն չափով ծավալելով սոցմրցումն ու  
հարվածախնությունը ջրոզների բրիգադների մեջ,  
պայքարելով լավորակ ջրումների համար և տա-  
լով բույսին անհրաժեշտ քանակութեամբ ջուր,  
մենք կատանանք ծխախոտի բարձրորակ և մեծ  
բերք:

#### ՋՐՈՒՄՆԵՐԻ ԳԱՆԱԿԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ

Մենք վերևում պարզաբանեցինք, թե ինչ  
ձևերով և ինչ նորմաներով պետք է ջրել ծխա-  
խոտը: Բացի դրանից, պետք է իմանալ, թե

քանի անգամ և լերբ պետք է ջրել ծխախոտը:  
Իրա համար ել այժմ քննութեան առնենք այս  
հերթականութեամբ: Նախհառաջ մենք պետք է  
պարզենք, թե ծխախոտի դաշտը սածիլելու համար  
քանի՞ անգամ և լերբ պետք է ջրել, այնուհետև՝  
ծխախոտի աճեցողութեան վոր շրջաններում ջրել:  
Իչառում ծխախոտի աճեցողությունն ունի  
դարպացման չորս շրջան:

1. Առաջին շրջանը կամ Ֆազը բույսի ար-  
մատային սիստեմի զարգացման շրջանն է, այ-  
սինքն՝ բույսի արմատակալման մոմենտից մինչև  
ինտենսիվ աճեցողութեան շրջանը:

2. Յերրորդ շրջանը բույսի վեգետատիվ  
որդանների կազմակերպման շրջանն է, այսինքն՝  
բույսի ուժեղ աճեցողութեան սկզբից մինչև  
ծաղկումը:

3. Յերրորդ շրջանը բույսի պաղտավութեան  
որդանների կազմակերպման շրջանն է, այսինքն՝  
ծաղկման սկզբից մինչև արկղիկների կազմակեր-  
պումը:

4. Հասունացման շրջանը, այսինքն՝ արկղիկ-  
ների կազմակերպումից մինչև աճեցողութեան  
վերջը:

Ըստ Հայաստանի ծխախոտագործական  
փորձնական կայանի դաշտավարական բաժնի  
դիտողությունների, ծխախոտի զարգացման վե-



բոհիշյալ շրջանները տեւում են մոտավորապէս չորս ամիս, ըստ վորում պայմանական ընդունվում են, վոր յուրաքանչյուր առանձին շրջան տեւում է մոտավորապէս մեկ ամիս:

### ՄԱԾԻՄԱՆ ՅԵՎ ՀԵՏՄԱԾԻՄԱՆ ՋՐՈՒՄ

Հիմնական պահանջները, վորոնք անհրաժեշտ են ստեղծելու համապատասխան պայմաններ սածիլները հողում կպչելու համար, դա շիթիլներէ սածիլումն է խոնավ հողում:

Խոնավ հողն անհրաժեշտ է վոչ միայն սածիլման շրջանում, այլև առաջին որերը՝ սածիլումից հետո դաշտում տնկված սածիլներն ավելի արագորեն և համազոր աճեցողություն ունենալու համար:

Մեր ծխախոտացան շրջաններում սովորաբար սածիլումն սկսվում է մայիս ամսի սկզբներին և տեւում է մինչև հունիսի կեսերը: Մածիլման ընթացքում յերբեմն տեղում են անձրևներ, վորոնք անբավարար են: Բացի դրանից, հողի վերնաշերտը 5—10 սմ խորությամբ քամու և արեգակի ազդեցության տակ արագորեն չորանում է: Ծխախոտի սածիլների համար սածիլման ընթացքում անհրաժեշտ է, վոր հողի վերին շերտերը գոնե մինչև 10 սմ խորությամբ խոնավ լինեն: Դրա համար սածիլումից առաջ անհրաժեշտ է դաշան անպայմանորեն շրել:

Յերբ լավ է շրել—սածիլումից անմիջապէս առաջ, թե՛ ավելի շուտ լավ է շրել վոչ թե սածիլումից անմիջապէս առաջ, այլ մի քանի ժամ (4—5) առաջ նախքան սածիլումը: Լավ է դաշաք շրել յերեկոյան, այն նախապատրաստելով հետևյալ որվա սածիլման համար, ըստ վորում պետք է հաշվի առնել հողաշերտի դրությունը: Թեթե հողերում սածիլումը պետք է կատարել շրելուց հետո:

Մեր սովորական միջակ հողերում, անմիջորեն շրելուց հետո, չի կարելի սածիլում կատարել, քանի վոր նախ՝ սածիլները կարող են չարմատակալել, վորովհետև սածիլ տնկողը թաց հողում չի կարող սածիլն ամուր սնկել հողի մեջ, յերկրորդ՝ սածիլ կատարողների աշխատանքի արտադրողականությունն ընկնում է՝ ցելսի մեջ աշխատելու հետևանքով: Ծխախոտի սածիլումը շրելուց 4—5 ժամ հետո կատարելով, յերբ խոնավությունը տարածվում է հողի մեջ, վերոհիշյալ քայերը միանգամայն վերանում են:

Սածիլումից 3—4 որ հետո, յերբ սածիլներն արմատակալում են, անհրաժեշտ է նորից մեկ անգամ շրել՝ (հետսածիլման շուր) սածիլներէ համաչափ աճեցողությունն ապահովելու համար:

Յեթե սածիլումը վաղ է կատարվում (գարնանային անձրևների շրջանում), այդ դեպքում հետսածիլման շուր կարելի յե չտալ:



**ՔԱՆԻ ԱՆԳԱՄ ՅԵՎ ՅԵՐԲ ՊԵՏՔ Ե  
ԶՐԵԼ ԾԵԱՍՈՏԸ ՍԱԾԻԼՈՒՄԻՑ ՄԻՆ-  
ՉԵՎ ԾԱՂԿՄԱՆ ՍԿԻԶԲԸ**

Ծխախոտի ծաղկումը մեր շրջաններում սկսվում է հուլիսի վերջերից կամ ոգոստոսի կեսերից: Այսպես, որինակ՝ Իջևանի, Շամշադինի, Կոտայքի, Ղափանի շրջաններում սածիլումը նորմալ ժամանակին կատարելու դեպքում, այսինքն՝ մինչև հունիսի 10-ը կատարելիս, ծխախոտի ծաղկումը կսկսվի ոգոստոսի սկզբներին: Այլանվերջում շրջանում ծաղկումն սկսվում է հուլիսին: Ծխախոտի սածիլման մոմենտից մինչև նրա ծաղկումը տևում է 60—70 օր, իսկ միջինը՝ 65 օր:

Ծխախոտը զաշտում սածիլելու համար անհրաժեշտ է առաջնորդվել ազրոկանոններով՝ նախատեսված հետևյալ ժամկետներով.

1. Այսնպիսի	շրջան	սածիլման սկիզբը	1/IV-ին	վերջը	5/VI-ին
2. Աշտարակի	"	"	1/IV "	"	10/VI "
3. Իջևանի	"	"	1/IV "	"	10/VI "
4. Ղափանի	"	"	1/IV "	"	10/VI "
5. Միկոյանի (Բեշեղեղ)	"	"	1/IV "	"	10/VI "
6. Կոտայքի	շրջան	"	5/IV "	"	10/VI "
7. Շամշադինի	"	"	1/IV "	"	10/VI "

Վերոհիշյալ ժամկետներին տնկված սածիլներն աճում են նորմալ, տալիս են բարձր և լավորակ ծխախոտ: Հաշվելով, վոր ծաղկումը կատարվում է 65 օր սածիլումից հետո, տեսնում

ենք, վոր բույսի աճեցողության այդ ժամանակաշրջանը կողիտ կերպով կարելի յե համարեք մայիս և հունիս ամիսները, մասամբ՝ հուլիս ամիսը:

Մայիս ամսին այնքան էլ շոգ չէ. մայիսի առաջին կեսում շատ շրջաններում անձրևներ են տեղում: Ծխախոտը քիչ ջուր է ծախսում՝ դեռևս փոքր հասակ և տերևային փոքր մակերես ունենալու հետևանքով: Այդ շրջանում սկսվում է ծխախոտի արմատների զարգացումը, ինչպես և աճեցողությունը:

Աճեցողության այդ շրջանում, այսինքն՝ առաջին ֆազում կարիք չկա ծխախոտը ջրելու: Յեթե ծխախոտը ջահել ժամանակ հաճախակի ջրել են և ջրային լավ պայմանների մեջ են դրել, այնպես վոր նա յերբեք կարիք չի գաացել ջրի, այս դեպքում կյանքի յերկրորդ շրջանում (ծաղկման նախորդակին) ծխախոտը կպահանջի նույնպիսի պայմաններ, քանի վոր բույսը չի կարող վարժվել քիչ ջուր ծախսելու: Յեթե յերկրորդ շրջանում ծխախոտին շատ ջուր չտրվի, այս դեպքում ծխախոտի վորակը շատ է լնկնում, վորովհետև ջրի բացակայության հետևանքով չի կարող կուտակել անհրաժեշտ նյութեր (ածխաջրատներ, յուղ և այլն), վորոնք ծխախոտին տալիս են վորակական հատկություններ: Բացի



դրանից, ծխախոտի աճման լերկորոզ շրջանը զուգադիպում է ամառվա շոգ ամիսներին և ջրումների քանակը քիչ տալու հետևանքով ծխախոտը կարող է ճայրվել:

Յեթե ծխախոտը ջահել հասակում առանց ջրելու հոդում պահվի անբավարար ջրային պաշարի պայմաններում, նա իր կյանքի յերկրորդ շրջանումն էլ տնտեսաբար և ծախսում ջուրը և հաջողությամբ դիմանում շոգ ամիսներին՝ հուլիտին, սեպտոտիսին: Այդ տեսակի ծխախոտի արմատային սիստեմը լավ է աճում և նա կարող է ջրից ոգտվել հողի ավելի խորը շերտերից:

Յեղնելով վերոհիշյալից, ծխախոտի աճման առաջին շրջանում, այսինքն՝ արմատակալման մոմենտից մինչև ինտենսիվ աճեցողության սկիզբը, շատ ջուր տալ չի թույլատրվում: Յեթե ծխախոտի սածիլումը կատարվել է մաշիսի սկզբներին, այս դեպքում առաջին շրջանում ծխախոտը կարելի չէ ամենևին չջրել: Յեթե սածիլումը կատարվում է մաշիսի վերջին կամ հունիսի սկզբներին, այդ դեպքում առաջին շրջանում անհրաժեշտ է ջրել մեկ անգամ՝ սածիլումից 15—20 օր հետո (չհաշված հետսածիլային ջրելը):

Սածիլումից 30 օր հետո սկսվում է ծխախոտի աճման ինտենսիվ շրջանը: Այս շրջանում ծխախոտի բարձրությունը հասնում է մինչև

30—40 սմ, սկսում են աճել տերևները, և, լեզանակի շոգ լինելու հետևանքով, բույսի միջոցով շատանում է ջրի գոյորշիացումը: Այդ շրջանում ծխախոտին անհրաժեշտ է ջուր տալ: Այդ շրջանը համարվում է բույսի աճման համար ամենապատասխանատու շրջանը և պահանջում է ավելի մեծ քանակությամբ ջուր՝ բույսի հետագա նորմալ աճեցողության և նյութերի կուտակման համար: Այդ շրջանում հողն անբավարար խոնավություն պարունակելու դեպքում կորստարեր ձևով կանդրադառնա բերքի վրա: Հողի մեջ միշտ պետք է գտնվի բավարար քանակությամբ ջուր, քանի վոր այդ շրջանում ջուրն ամենից շատ է ծախսվում: Վորպեսզի ջրի այդ ծախսումը լրացվի և հնարավորություն տրվի ծխախոտին նորմալ աճելու, անհրաժեշտ է հաճախ ջրել: Այդ պատճառով ջրումների քանակը ծխախոտի աճեցողության յերկրորդ շրջանում պետք է ավելի լինի, քան առաջին շրջանում՝ սածիլումից հետո:

Մեր ծխախոտագործական այն շրջաններում, վորտեղ ստորերկրյա ջրերը խորն են, միջակ և ժանր հողերում այդ շրջանում ծխախոտն անհրաժեշտ է ջրել լերեք անգամից վ՛չ պակաս:

Այդ շրջանում առաջին ջրումը պետք է կատարել սածիլումից 30 օր հետո, իսկ հետագա ջրումները՝ յուրաքանչյուր 10 օրից հետո:



Ըստ Հայաստանի ծխախոտագործական փորձ-  
նական կայանի ավյալների, ծխախոտի անեցող-  
ությունների լեզրերը շրջանում անհրաժեշտ քա-  
նակի ջրումները չտալը անդրադառնում է ծխա-  
խոտի բերքի վրա: Վորպես որինակ կրեքնեք  
ծխախոտի բերքի չափը չոր մասսայով և տեսակ-  
ների յեղուլթը տարբեր քանակի ջրումների ժա-  
մանակ—նրա անեցողության առաջին և յերկ-  
րորդ շրջանում:

Ջրումների թիվը		Ջրի մասայի բեր- քը 1 հեկտ. ցանտ.	Բերքատվության տոկոսը	Մթախոտի տեսակ- ների տոկոսներով	
Մինչ անեցող- ութ. ինտեն- սիվ շրջանը (1-ին ֆոն)	Ինտենսիվ ան- եցողութ. մինչև ծաղկումը (2-րդ ֆոն)			1 և 3 տեսակ 4	3-րդ տեսակ 5
1	3	22,5	100,0	65	35
3	1	17,5	78,0	47	53
3	3	18,8	84,0	55	45

Հիշյալ տախտակից տեսնում ենք, վոր ամե-  
նաշատ բերքն ստացված է 3 ջրման դեպքում  
մինչև ծաղկումը (ծխախոտի անեցողության 2-րդ  
շրջան): Առաջին շրջանում՝ սածիլումից հետո՝  
ջրումների մեծ քանակ տալով, այնուհետև բույ-  
սի ինտենսիվ անեցողության շրջանում ջրում-  
ների քանակը կրճատելով, մենք այդ տախտակից  
տեսնում ենք, վոր բերքատվությունն իջնում է

22 տոկոսով ու ավելացնում ծխախոտի տեսակ-  
ների վորակը: Եստ ջրումներ տալը, ծխախոտի  
անեցողության թե առաջին և թե յերկրորդ  
շրջանում նույնպես դրական արդյունք չի տա-  
լիս,—ջրումների քանակը նորմալ բաշխելու հա-  
մեմատությունը բերքը 16 տոկոսով ցածր է  
ստացվում:

Միանգամից չափազանց մեծ թվով ջրելը,  
ծխախոտի սածիլումից հետո, իջեցնում է ծխա-  
խոտի բերքը, իզուր տեղն աշխատանք է ծախս-  
վում ավելորդ ջրումների համար և իջնում են  
ծխախոտի վորակական ցուցանիշները: Այդ  
պատճառով առաջին շրջանում, սածիլումից  
հետո, առանձնապես շատ ջրելու կարիք չկա: Բա-  
վական է տալ մեկ ջուր սածիլումից 15 որ հետո:

Բույսի ինտենսիվ անեցողության մոմենտից  
մինչև ծաղկումը, վորը տևում է մոտավորապես  
30 որ, անհրաժեշտ է ավելի մեծ թվով ջուր:  
Անհրաժեշտ է ջրել յերեք ընդմիջումներով՝ յու-  
րաքանչյուրը 10 որ տեվողությամբ:

Կարելի չէ ծխախոտը ջրել ծաղկման ժա-  
մանակ.—Միախոտի ծաղկման շրջանը մեր շրթ-  
ջաններում վերջանում է ոգոստոսի առաջին կամ  
յերկրորդ կեսերին. այդ մոմենտին ել սկսվում է  
տեքնների տեխնիկական հասունությունը, վորը  
տեղում է ամբողջ սեպտեմբեր ամիսը: Միախոտն



Ըստ Հայաստանի ծխախոտագործական փորձ-  
նական կայանի տվյալների, ծխախոտի անեցող-  
ությունը չերկրորդ շրջանում անհրաժեշտ քա-  
նակի շրուճները չտալը անդրադառնում է ծխա-  
խոտի բերքի վրա: Վորպես որինակ կրերենք  
ծխախոտի բերքի չափը չոր մասսայով և տեսակ-  
ների յեղուլթը տարբեր քանակի շրուճների ժա-  
մանակ—նրա անեցողության առաջին և յերկ-  
րորդ շրջանում:

Շրուճների թիվը			Մթախոտի տեսակ- ների քանակներով			
Մին անեցող- ությունը յետևե- լով զրգանքը (—ին ֆազ)	Ինտենսիվ անե- ցողությունը ժաղկումը (2-րդ ֆազ)	Չոր մասայի բեր- քը 1 հեկտ. ցեմտ:	Քերտավորված տակալը	1 և 3 տեսակ		3-րդ տեսակ և ըլուկ
				1	3	
1	3	22,5	100,0	65		35
3	1	17,5	78,0	47		31
3	3	18,8	84,0	55		29

Հիշյալ տախտակից տեսնում ենք, վոր ամե-  
նաշատ բերքն ստացված է 3 շրման դեպքում  
մինչև ծաղկումը (ծխախոտի անեցողության 2-րդ  
շրջան): Առաջին շրջանում՝ սածիլումից հետո՝  
շրուճների մեծ քանակ տալով, այնուհետև բույ-  
սի ինտենսիվ անեցողության շրջանում շրուճ-  
ների քանակը կրճատելով, մենք այդ տախտակից  
տեսնում ենք, վոր բերքատվությունն իջնում է

22 տոկոսով ու ավելացնում ծխախոտի տեսակ-  
ների վորակը: Ծառ շրուճներ տալը, ծխախոտի  
անեցողության թե առաջին և թե յերկրորդ  
շրջանում նույնպես դրական արդյունք չի տա-  
լիս,—շրուճների քանակը նորմալ բաշխելու հա-  
մեմատուլթյամբ բերքը 16 տոկոսով ցածր է  
ստացվում:

Միանգամից չափազանց մեծ թվով շրեյը,  
ծխախոտի սածիլումից հետո, իջեցնում է ծխա-  
խոտի բերքը, ի դուր տեղն աշխատանք է ծախս-  
վում ավելորդ շրուճների համար և իջնում են  
ծխախոտի վորակական ցուցանիշները: Այդ  
պատճառով առաջին շրջանում, սածիլումից  
հետո, առանձնապես շատ շրեյու կարիք չկա Բա-  
վական է տալ մեկ շուր սածիլումից 15 որ հետո:

Բույսի ինտենսիվ անեցողության մոմենտից  
մինչև ծաղկումը, վորը տևում է մոտավորապես  
30 որ, անհրաժեշտ է ավելի մեծ թվով շուր:  
Անհրաժեշտ է շրեյ յերեք ընդմիջումներով՝ յու-  
րաբանչուրը 10 որ տեվողությամբ:

Կարելի յե ծխախոտը ջրել ծաղկման ժա-  
մանակ.—Մխախոտի ծաղկման շրջանը մեր շր-  
ջաններում վերջանում է ոգոստոսի առաջին կամ  
յերկրորդ կեսերին. այդ մոմենտին ել սկսվում է  
տերևների տեխնիկական հասունությունը, վորը  
տևում է ամբողջ սեպտեմբեր ամիսը: Մխախոտն



այդ դեպքում առանձնապէս ջրի կարիք չի զգում. այնքան, վորքան վոր բույսի կյանքը դեռ շարունակվում է, ծաղկումից մինչև արկղիկներէ կազմակերպումը միանգամայն բավական է մեկ անգամ ջուր տալը:

Այս ջրումը գուգադիպում է տերէններէ յերկրորդ Ֆազին, և ըստ հին ծխախոտագործների դիտողութիւնների, լավ ազդեցութիւն է թողնում ծխախոտի վորակի վրա, բարձրացնելով նրա վառման և համի հատկութիւնները և այլն:

Բացի դրանից, բույսի միջոցով գոլորշիացումը հողից զգալի չափով պակասում է, քանի վոր բույսը ստվեր է գցում հողի վերին շերտի վրա, մյուս կողմից՝ բույսի ցողունի վրա տերէնները փչանում են:

Այդ շրջանում մեծ քանակութեամբ ջուր տալը բերքատուութեան բարձրացման վրա դրական արդշունք չի տալիս, ընդհակառակը, բույսի տերէնները նրբանում են և չեն դիմանում տաք ոգին, սկսում են «այրվել», անհրաժեշտութիւն է զգացվում տերէններն արագ կերպով հաճաքելու, և զարգանում են մեծ քանակութեամբ «բշեր». այդ բոլորն առաջացնում են աշխատանքի ուժի լարվածութիւն և անտեսութեանը վնաս է հասնում:

Մխախոտի զարգացման 4-րդ շրջանը, այն

է՝ հասունութեան շրջանը (բուսաբանական իմաստով), յերբ սկսվում է բույսերի սերմերի հասունացումը, ծխախոտն ամենեին չի կարելի ջրել: Նախևառաջ արդշունաբերական ծխախոտեր ըստանալու համար այդ շրջանը վոչ մի առանձին նշանակութիւն չունի, քանի վոր ծխախոտի տերէնների տեխնիկական հասունութիւնն սկսվում է բավականին շուտ, քան բուսաբանական հասունութիւնը, իսկ յերկրորդ՝ սերմերի արկղիկները պետք է ծաղկահատվեն, վորը մեզ համար առանձին արժեք ունի, քանի վոր բույսն ավարտում է իր կյանքը և լրացուցիչ ջրի կարիք չի զգում:

Հետևապէս, յեխելով վերոհիշյալից, և Հաստատանի ծխախոտագործական փորձնական կայանի տվյալներից, ջրելու ամենալավ սխեման կարելի է համարել հետևյալը.

Մեկ ջրում բույսի ամրապնդումից մինչև նրա ինտենսիվ աճեցողութիւնը, յերեք ջրում՝ ինտենսիվ աճեցողութիւնից մինչև ծաղկումը և մեկ ջրում ծաղկման շրջանում՝ մինչև հասունութիւնը: Բուսաբանական հասունութեան մոմենտին ջուր չի տրվում: Վերոհիշյալ սխեման արտահայտվում է 1—3—1—0. Թվանշանները ցույց են տալիս ջրումների քանակն ըստ ժամանակաշրջանների:



Ջրի խնայողութիւնը հողում.—Այն բոլորը, ինչ վոր ասվեց վերևում, գործնականում կիրառելիս կտա լավ արդյունք միայն այն դեպքում, յեթե հողը լավ և կանոնավոր մշակվի մինչև ծխախոտի սածիլումը, ինչպես նաև բույսի աճեցողութեան ընթացքում: Անհրաժեշտ է վոչ միայն ծխախոտը լավ ջրել և իմանալ այդ ջերը լավ է կատարել, այլև իմանալ տվյալ ջուրը հողում պահպանելը: Հիշյալ նպատակին կարելի չէ հասնել հողի վերնաշերտի համապատասխան մշակութեամբ՝ փխրեցումով:

Ժամանակին կատարված գարնանային խորհերկը հնարավորութիւն է տալիս պահպանել հողում անձրևներից և ձնից կուտակված ջրի պաշարը: Հողը պետք է պահել փխրուն վիճակում, վորն զգալիորեն պահպանում է ջուրը գոլորշիացումից (հողի վերին շերտերից):

Փխրուն հողում ողն ավելի լավ և շուտ է թափանցում, վոր անհրաժեշտ է բույսի արմատների շնչառութեան և ծխախոտի համար աննշարար նյութեր կուտակելու համար:

Ժամանակին և համապատասխան մշակումը վոչնչացնում է ծխախոտի դաշտի մոլախոտերը: Դրանով մենք պահպանում ենք ծխախոտի համար աննշարար նյութեր և հողում՝ մեծ քանակութեամբ խոնավութիւն, վորն ոգտագործվում է

մոլախոտերի կողմից: Բացի դրանից, մոլախոտերով պատած դաշտում մեծ չափով զարգանում են վնասակար միջատներ, իսկ հաճախ ել հիվանդութիւններ, վորոնք հետագայում անցնում են ծխախոտին, այդ պատճառով հիվանդութիւններից և վնասատուներից խույս տալու համար անհրաժեշտ է ազատվել մոլախոտերից:

Սածիլումից հետո, ծխախոտի աճեցողութեան շրջանում, անհրաժեշտ է դաշտը լավ մշակել:

Նախևառաջ անհրաժեշտ է հողը ջրելուց հետո փխրեցնել: Ջրումից հետո փխրեցումը պետք է կատարել յերկրորդ կամ յերրորդ օրը, հենց վոր հողը գործիքներին (ուրագ և այլն) չկաշխի:

Քաղհանը և բուկ տալը պետք է կատարել ջրումներից հետո և հարմարեցնել այդ աշխատանքներին, վորը գործնականում միշտ հաջողվում է:

Քաղհանը և բուկ տալը, վորոնք կատարվում են մինչև ջրումը, միանգամայն անոգուտ են, վորովհետև քաղհանված մոլախոտերը, վորոնք չեն հավաքվում շարքերի միջից, ջրումից հետո կարող են նորից աճել: Բուկ տալուց հետո ջուրը կլվանա հողը և բաց կանի մատղաշ բույսերի արմատները, կպնդացնի հողաշերտը և ուժեղ չափով կավելացնի գոլորշիացումը:



Հողի փխրեցման աշխատանքներն անհրա-  
ժեշտ եւ մեքենայացնել, վերովհետեւ միջարքերի  
տարածութեան լայնութեանը եւ ակոսային ձևով  
չրելու յեղանակը հնարավորութեան եւն տալիս  
այդ բանը կատարելու:

Մեքենայական մշակումից հետո բույսերի  
մտակա այն հողամասերը, վորը չի ընդգրկում  
կալտիվատորը, անհրաժեշտ եւ փխրեցնել ձեռքի  
գործիքով, միաժամանակ ուղղելով ակոսները:

Միախոտի ամբողջ աճեցողութեան շրջանում  
չրելուց հետո անհրաժեշտ եւ կատարել յերկու-  
քաղհան եւ բուկ տալու աշխատանքը:

Ջրելու ժամկետները, մեքենայացրած մշա-  
կումը եւ ձեռքի քաղհանը նախորդ պետք եւ  
նախատեսել աշխատանքի ծրագրով եւ բոլոր աշ-  
խատանքները կատարել վորոշ կարգով ու հաջոր-  
դականութեամբ: Առանց վորոշակի կարգի եւ հա-  
ջորդականութեան աշխատանքն արդյունք չի տա-  
լիս: Քիչ արդյունք եւ ստացվում շրումներից, չերբ  
հողը չի փխրեցվում: Նույնպես վորոշ ոգուտ չի  
տալիս փխրեցումը, լեթե նա չի կատարվում ժա-  
մանակին: Այդպիսով աշխատանքի վորոշ կարգ  
պիտի սահմանեն եւ ճիշտ պլան ունենան մեք  
թորհանտեսութեանները եւ կոլտնտեսութեան-  
ները:

Վոռոգման ցանցի կարգավորումը. — Ջրո-

վի տնտեսութեաններում մեծ նշանակութեան  
ունի վոռոգման ցանցը կանոնավոր վիճակում  
պահելը:

Վոռոգման ցանցի բավարար աշխատանք եւ  
նրանից վորոշ ոգուտ ստանալու համար, բոլոր  
տուները պետք եւ պահել կանոնավոր վիճակում  
եւ ժամանակին կատարել դրանց վերանորոգման  
աշխատանքները:

Ձանազան պատճառներ, վորոնք անդրադառա-  
նում են վոռոգման սխտեմի կանոնավոր աշխա-  
տանքների վրա, հետեւյալներն են.

1. առուները լցվում են հողով, զանազան  
քարերի կտորտանքներով եւ այլն:

2. առուների հո. նի եւ կողքերի վողոցումը:

3. առուների կողքերի քայքայումն անասուն-  
ների կողմից՝ նրանց շրելու եւ անցնելու տեղերում:

4. սայլերով անցման տեղերում՝ ցանցի քայ-  
քայումը:

5. առուների մեջ մեծ չափով բույսերի աճումը:

Վոռոգման ցանցի նորմալ աշխատանքներն  
ապահովելու համար անհրաժեշտ եւ մանրագնին  
հետեւել եւ վերացնել բոլոր այն պատճառները,  
վորոնք արգելք են հանդիսանում աշխատանքի  
նորմալ դրութեան:

Գարնանը, շրելու կամ պլանի այլ սկզբին, վի-



սհիշյալ պատճառները, վորոնք անդրադառնում են վոռոգման ցանցի վրա, անհրաժեշտ է անպայմանորեն վերացնել: Առուները պետք է մաքրվեն սղմից, վերաշինվեն քանդված մասերը, նորոգվեն կառուցումները և այլ փնասվածքները: Այդ բոլորը պետք է կատարել վաղ գարնանը, վոր առուները լավ աշխատեն և կարգավորված լինեն ջրումների լեռուն ժամանակը: Բացի գարնանը կատարած վոռոգման ցանցի հիմնական նորոգումներից, անհրաժեշտ է հետեվել, վոր ցանցը կանոնավոր վիճակում լինի և ամառային աշխատանքների ընթացքում ժամանակին մաքրվի, թույլ չտալ, վոր մարդիկ անցնեն առուների վրայով, շենել հեղեղված տեղերը, վերանորոգել քանդված մասերը և այլն:

Վոռոգման ցանցի ճիշտ աշխատանքներն ապահովում են ջրի կանոնավոր բաշխումը. պետք է հաշվի առնել առուների տարողությունը և թույլ չտալ ավելորդ ջուր հոսելու: Զրի բաշխումը կատարվում է ջրոգտագործման վորոշակի սղանով, վորը կազմվում է ջրային տնտեսության արգանների կողմից:

Յուրաքանչյուր կոլտնտեսության և խորհրդային տնտեսության համար, վորն ընկած է ջրբաժան ցանցի գոտում, ըստ ջրոգտագործման սղանի, սահմանվում է յուրաքանչյուր ամսվա համար ջրի

ծախսման նորմա՝ ցույց տալով ջրելու ժամանակն այս կամ այն մշակույթի համար: Զրի պահասութան դեպքում սահմանվում է ջրելու հերթականություն:

Յուրաքանչյուր կոլտնտեսության ջրի ծախսը վորը նախատեսվում է ջրոգտագործման սղանով, սահմանվում է՝ հիմք ունենալով կոլտնտեսության ցանած մշակույթի տեսակը, նրա ջրային պահանջը և տարածության չափը:

Ժամանակին և ճիշտ ջրելու համար, վորպեսզի տեղի չունենա կիսատ ջրում և չորացում, անհրաժեշտ է, վոր բոլոր ջուր ոգտագործողները խստորեն կիրառեն ջրոգտագործման սղանը, պայքարեն խախտումների և ինքնակամ ջուր վերցնողներին դեմ:

Յեթե յուրաքանչյուր կոլտնտեսություն ջուր վերցնի իր համար վորքան նա կամենում է և յերբ ցանկանում է, դա այն հետևանքը կունենա, վոր մյուս կոլտնտեսությունները կմնան առանց ջրի և չեն կարողանա լրիվ ջուր տալ իրենց ցանքերին: Այդ իսկ պատճառով պետք է ջրել այն ժամանակ, յերբ դրա կարիքը զգում է բույսը. դաշտերը պետք է ջրել միայն սղանային կարգով և այն նորմաներով, վորոնք նախատեսված են ջրոգտագործման սղանով:

Մեր կոլտնտեսություններում և խորհրդային



անսուբյուռններում, վորտեղ ամբողջ աշխատանքները կատարվում են նախորդ կազմած պլանով, առաջին հերթին պետք է կարգավորվի պլանային ջրոգտագործման հարցը:

### ՅԵՉՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Յեզրակացության մեջ հակիրճ կհիշատակենք այն առաջադրությունները և կանոնները, վորոնց կիրառումից մենք կստանանք խոշոր արդյունքներ ծխախոտի բարձր բերք ստանալու և շուրջ անտեսաբար ոգտագործելու համար:

1. Ապահովենք յեզ պահպանենք անձրեվիջուրը հողում.—Սոր հերկը հնարավորություն է տալիս հողին իր մեջ կլանելու և պահպանելու մեծ քանակությամբ անձրևաջուր ու ձնաջուր:

2. Հողը մեակեցնե՛ք ռուս-ռուս յեզ լավ.—Ջուրը հեշտությամբ կորչում է հողից՝ գոլորշիացման միջոցով: Հողի վերին շերտի փխրեցումը պակասեցնում է գոլորշիացումը: Հողը, վորքան հնարավոր է, պարնանը պետք է լավ մշակված լինի և կատարվի յերկու կամ յերեք մշակում (քաղհանը և բուկ տալը) բույսի աճեցողության շրջանում, ըստ վորում քաղհանը և փխրեցումը պետք է կատարել անպայմանորեն ջրումներից հետո:

3. Ծխախոտը սնկեցնե՛ք լավ խոնավացրած

հողում.—Սածիլման մոմենտին լավ խոնավացրած հողը հնարավորություն է տալիս բույսի արմատներից լավ զարգանալու, ապահովում է տնկված սածիլների համաչափ աճեցողությունը, հնարավորություն է տալիս յերկարաձգել առաջին ջրելու ժամանակամիջոցը:

4. Ծխախոտը միջրե՛ք ռուս ռուս.—Հետսածիլման և աճեցողության առաջին ջրումների միջև յեղած ժամանակամիջոցը վորքան յերկար լինի, այնքան բույսի արմատները խորը կթափանցեն հողի մեջ, վորը հնարավորություն կտա բույսին խոնավություն վերցնելու հողի խորը շերտերից և ամբողջ ցանքի ընթացքում ջրի ավելի քիչ կարիք կզգացվի:

Ծխախոտի աճեցողության առաջին շուրջ պիտի տալ սածիլումից 15 ուր հետո:

5. Վռոճեցնե՛ք մի քանակությամբ հիբրատեցե՛ք մանր աղաներով ջրելու ձևը: Ջրելու այս ձևը տալիս է ջրի անտեսում, ապահովում է հողը համաչափ խոնավությամբ, հնարավորություն է տալիս լայն չափով կիրառելու ծխախոտի մշակման պրոցեսների մեքենայացումը և մանր արմատներով ամենալավ ձևով խոնավությունն անցնում է բույսին: Բացի այդ, ջրելու յեղանակը հնարավոր է կիրառել բոլոր տեսակի և թեքություն ունեցող հողերում:



6. Վոռոզեցե՛ք ժամանակիսն.—Մխախտախն շուր տվեք այն ժամանակ, յերբ դրա կարիքը նա իրոք զգում ե: Վոռոզեցեք ծխախտոր միջին ծաղկումը, տալով վոչ պակաս յերեք շուր՝ 10 որ ընդմիջումներով: Ծաղկման շրջանում միջին հասունութունը տվեք միայն մեկ շուր:

7. Համաչափ ծախսեցե՛ք ջուրը.—Ջրման նորման ավելացնելու դեպքում ծխախտոի բերքը մեկ հեկտարից ավելանում ե մինչե՛վ վորոչ աստիճանի. հետագա ջրի ավելացումն իջեցնում ե բերքատվությունը:

Մխախտոի համար միջակ հողերում ոգտագործեք ջրելու նորման՝ յուրաքանչյուր հեկտարին 400—500 խոր. մետր, իսկ ծանր հողերում՝ 600—800 խոր. մետր:

8. Վոչնչացե՛ք մոլախոտերը.— Մոլախոտերը վերցնում են այնքան ջուր, վորքան ե թանգարժեք բույսերը: Վոչնչացնելով մոլախոտերը, դուք թողնում եք ծխախտոի համար ավելի շատ ջուր: Բացի այդ, վերացնում եք հիվանդությունների ե վնասատուների բները:

9. Հետեցե՛ք, վոր վոռոզման ցանցը կանոնավոր աշխատի: Վոռոզման ցանցի անկանոնության պատճառով հաճախ կորչում ե մեզ համար թանգարժեք ջուրը: Պալքարեցեք հոտունության գեմ, մի թույլատրեք, վոր անասուններն առու-

ները վիչացնեն: Ունեցե՛ք ճիշտ ե կանոնավոր աշխատող վոռոզման ցանցի առուններ:

ՋՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՅԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԸՍՏ ԾԽԱՍԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Տալ լրիվ ցուցմունք, թե վոր շրջաններում յերբ պետք ե ջրել ծխախտոր—գա բավականին գժվար ե: Իրա համար անհրաժեշտ ե մանրամասն իմանալ, թե այդ շրջաններում ինչպիսի հողեր կան, տվյալ տարվա մեջ ինչպիսի ոգերեվութարանական ե կլիմայական պայմաններ են սպասվում, ստորերկրյա ջրերը խորն են գտնվում, թե վոչ ե այլն: Այս ամենը հիմնականում, իհարկե, հաշտնի յեն: Հայաստանի ծխախտագործական վորձնական կայանի տվյալների հիման վրա, մենք կտանք մոտավոր ցուցմունքներ, սակայն վոչ լրիվ մանրամասնություններով:

Մխախտոի մշակույթը, առավել ես ջրովին, պահանջում ե առանձին ուշադրություն:

Ամեն տարվա հոժմույթի վորակը կախված ե մի շարք կլիմայական ե այլ պայմաններից:

Անհրաժեշտ ե, վոր իրենք՝ ծխախտագործ կոլտնտեսականներն ամեն տարի հաշվի առնեն իրենց շրջանի առանձնահատուկ պայմանները: Տեղերում ավելի հեշտ ե իմանալ, թե քանի անգամ ե յերբ լավ ե ծխախտոր ջրել, ոգտվելով սույն գրքի ցուցմունքներից: Յեթե չերբեմն կոլտնտեսականները կգժվարանան անզական



պոլմաններում վորոշել վոռոգման ինդիքը, այդ դեպքերում պետք է դիմել շրջանի գյուղատնտես-ծխախոտագործի սգնութեանը:

Ներքև մենք կտանք ծխախոտագործական շրջանների շրումների մոտավոր բնութագիրը:

1. Ալլահվերդու, Իջեվանի յեվ Նամեադի-նի Երջանների հողերն ընկած են Հայաստանի հյուսիսային մասում: Ծխախոտի համար մշակելի տարածութուններն ընկած են Դեբեգչայ, Աղրս-տաֆա և մյուս գետերի հովիտներում:

Այդ շրջանների կլիմայական պայմանները վորոշ չափով նման են միմյանց: Հողերը պատ-կանում են ընդհանուր տիպին, ունեն տղմային նստվածք և շագանակագույն են:

Այդ շրջանների համար ջրելու քանակը և բաշխումը պետք է լինի հետևյալ կերպ. պար-տադիր ջրում ցանկալի յե կատարել սածիլու-մից 10—12 ժամ առաջ և սածիլումից 4—5 որ հետո:

Վեգետացիոն շրումներ անհրաժեշտ է կա-տարել 4—5 անգամ: Առաջին ջրելը՝ սածիլու-մից 15 որ հետո (մայիսի 25—30-ը), մինչ բույսի ինտենսիվ աճեցողութեան սկիզբը, այսինքն՝ այն ժամանակ, յերբ բույսն ունենում է 3—5 տերև: Յերկրորդ ջուրը տրվում է առաջին ջրումից 15 որ հետո, բույսի ինտենսիվ աճեցողութեան սկզբին (5-ը հունիսի): Յերրորդ ջուրը տրվում է յերկ-

րորդ ջրումից 15 որ հետո (15—20 հունիսի): Չորրորդ ջուրը տրվում է յերկրորդ ջրումից 15 որ հետո, մինչև ծաղկումը (1—5-ը հուլիսի): Հինգե-րորդ ջուրը տրվում է ծաղկումից 20 որ հետո (20—25-ը հուլիսի), այսինքն՝ հասունութունից առաջ:

Վերոհիշյալ ժամկետները միջին են և յեն-թակա յեն փոփոխման, յեղնելով սածիլման ժամ-կետից, միջնորոտային տեղումներից և այլն: Ընդ-հանրապես ջրելու սխեման հետևյալն է. 1—3—1 կամ 1—2—1:

Ծխախոտը ջրելու նորման վերոհիշյալ շրջան-ների համար հետևյալն է. մեկ ջրումի համար 300—500 խոր. մետր մեկ հեկտարին:

Այն տարիները, յերբ սածիլման ընթացքում մեծ քանակութեամբ զարնանային տեղումներ են լինում (անձրևներ) ծխախոտի, զարգացման առա-ջին շրջանում կարելի յե չջրել: Այս դեպքում ջուրը տրվում է 0—3—1 սխեմայով:


2. Կոսայի շրջանն իր կլիմայական և հո-գային պայմաններով տարբերվում է նախորդ շրջաններից: Ծխախոտի վոռոգման համար ան-հրաժեշտ է, բացի պարտադիր նախասածիլման և սածիլման շրումներից, տալ չորս կամ հինգ ջուր: Այն տարիները, յերբ խոնավութունը բարձր է և ջերմաստիճանը ցածր, անհրաժեշտ է ջրել պակի քիչ, տալով 3—4 ջուր:



Առաջին շուրն անհրաժեշտ է տալ սածիլու-  
մից 15 որ հետո (5—10-ը հունիսի), այնուհե-  
տև յերկու կամ լերեք շուր (յեկնելով տվյալ  
տարվա յեղանակի պայմաններից) ծաղկումից  
ստաջ՝ 10—15 որ ընդմիջումով և մեկ շուր՝  
ծաղկելուց հետո: Զրեյու սխեման է 1—2—1  
կամ 1—3—1: Ծխախոտը շրեյու նորման այգ  
ըջանում պետք է լինի մեկ հեկտարին 400—600  
խոր. մետր:

3. Նախալեռնային գոտիների ծխախոտա-  
գործական ըջանների—Քեշիշքենդի, Փաշալվի և  
Ղափանի ջրումների քանակը կարող է տատան-  
վել 3—4-ի, իսկ մի քանի տեղերում՝ մինչև 5-ի  
միջև: Զրումների բաշխման սկզբունքը նույնն է,  
ինչ վոր մյուս ըջանների համար: Զրեյու սխե-  
ման 1—3—1 է, սակայն կարող է փոփոխվել,  
նկատի ունենալով յուրաքանչյուր տարվա պայ-  
մանները: Զրեյու նորման (մեկ հեկտարին) տա-  
տանվում է 300—500 խոր. մետրի միջև:

Ընդհանրապես ոգտվելով սույն գրքույկում  
հիշատակված կանոններով, հաշվի առնելով տեղի  
հողային, կլիմայական և այլ պայմանները, գյու-  
ղատնտեսի ոգնությամբ միշտ կարելի յե կազմել  
ջրեյու նորմաները, ջրումների քանակը և ժա-  
կետները, վորոնք ապահովում են ծխախոտի  
վորակական և քանակական բարձր ցուցանիշները:



Տեք. իմք.՝ Հ. Մ ու ը ր ա դ յ ա ն  
Ազգ. իմք.՝ Ա. Բ. Գ ը ի դ ո ը յ ա ն  
Սրբազրի՝ Ե. Ա յ վ ա դ յ ա ն

Գլուխ լիադ. Ս.—372, Երատ, Աճ 310,  
գատվեր Աճ 147, տիրած 2000-հանձն-  
վել է արատգրության 1/III 1936 թ.  
ոտորագրված է ապագրելու 15/III 1936 թ.  
31/4 տղ. թերթ՝ 1 տղ. թերթ, 20480 տղ. հը.

Գյուղերատե տղարան, Տեքևան,  
Նալբանդյան 11





204

18510

9762 40 409.



БИБЛИОТЕКА КОЛХОЗНИКА

А. Ф. РАДЬКО

**ОРОШЕНИЕ ТАБАКА**

(из работ армянской опытной табачной станции)

СЕЛЬХОЗГИЗ 1936 ЭРИВАНЬ